ՆԵԼԼԻ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
hasmikbakurgalstyan@mail.ru

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ «ԴԱՐՊԱՍ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ցեղասպանություն, հուշագրություն, ազգային ինքնություն, հայոց պատմություն, ազգային ոգի, դատապարտում, ազգային արմատներ:

Ключевые слова и выражения: память, национальная специфика, жизнь армянской диаспоры, свидетели очевидцы событий, историческая несправедливость, историческая действительность.

Key words and expressions: memory, national identity, the life of the Armenian diaspora, witnesses witnesses, historical injustice, historical reality.

Հայապահպանման գործում անկրկնելի է անգլիագիր Փիթեր Սուրյանի դերը: «Ես ամերիկացի գրող եմ և որպես հայկական սփյուռքի անդամ՝ հայ գրող եմ: Սփյուռքը նորություն չէ մեզ համար: Մեր պատմության մեծ մասը- վկայում է Փիթեր Սուրյանը,-ծավալվել է այս կամ այն սփյուռքում: Եվ, իհարկե, «սփյուռքյան» մեր պատմությունն առավելապես ծնունդ է ամենասոսկալի դժբախտությունների»[1]:

Ամերիկյան գրականութեան մեջ հետագիծն ունեցող ծագումով հայ արձակագիրը սրտով ու հոգով միշտ կարեկիր է եղել հայության խնդիրներին, նա **ակտիվորեն մասնակցել է Հայրենիքի և Սփյուռքի գրական-մշակութային կյանքին: Հեղինակ է բազմաթիվ պատմվածքների, երեք վեպերի՝ «Միրի» (1957), «Լավագույնը և վատթարը ժամանակներից» (1961) և «Դարպաս» (1965), ինչպես նաև էսսեների, գրաքննադատական և վերլուծական հոդվածների (մասնավորապես, նվիրված Վիլյամ Սարոյանի և Ֆրանց Վերֆելի ստեղծագործությանը): Հայաստանում հայերեն լույս են տեսել Փ. Սուրյանի «Ընթրիք օտարների հետ» պատմվածքների ժողովածուն (2010), «Դարպաս» (2011), «Միրի» (2013) վեպերը և «Սպասումի մեկ դար» (2015) էսսեների ժողովածուն, «Լավագույնը և վատթարը ժամանակներից» (2017) վեպը:**

[1] **Գրական թերթ,** Փիթեր Սուրյան գրողը և սփյուռքը, Երևան, 2017, Մայիսի 6: *Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011թ.:*

Փ. Սուրյանն իր իսկ բառերով ասած «Սարոյեանից յետոյ երկրորդ արուեստագէտն է, որ խորաքնին «ընթրիքի», այսինքն՝ իմաստալից զրոյցի է նստում «օտարների հետ», յաճախ օտարի, յաճախ հայի զգացումներով ու ճանաչողութեամբ»[2] :

1965 թ. Սուրյանը գրում է **«Դարպաս» (The Gate) վեպը, ընթերցողի դատին ներկայացնում հայոց ցեղասպանությունը, 20-րդ դարասկզբի արևմտահայ և 50-ականների սփյուռքահայ քաղաքական կյանքը, հերոսների մաքառումները, սերնդափոխությունը, նորօրյա կյանքն իր խնդիրներով ու բարդույթներով: Վեպը Ստեփանյանների գերդաստանի պատմությունն է՝ սկսած 1895 թվականից հայկական կոտորածներից մինչև 20-րդ դարի 60-ական թվականները, վեպի հիմքում ընկած է իր գերդաստանի պատմությունը, որն անմասն չի մացել ցեղասպանությունից:** «Իմ հեղինակած «Դարպաս» վեպում,- վկայում է Փիթեր Սուրյանը,- հատված կա մի կերպարի մասին, որ սքողված կերպով ենթադրում է պապիս՝ Միսակ Սուրյանին, որին երբևէ չեմ տեսել: Ներկայացված է այն պահը, երբ նախկինում կորովի և եռանդուն տղամարդը ցեղասպանությունը վերապրելուց հետո անսպասելիորեն կրկին հայտնվում է Կոստանդնուպոլսում. «Սարգիսը բացեց դուռը: Շեմին մի տղամարդ էր կանգնած՝ կոկիկ, բայց մաշված հագուստով, որ ընդամենը շապիկ էր և անգոտի անդրավարտիք: Հայրն էր: Դեմքը, որ կարծես ավելի լայնացել ու նիհարել էր, թխացել, խորակնճիռ կռու պոպոքի էր նմանվել, աչքերի սպիտակուցները մեծացել էին: Կանգնել էր անշարժ և սարսափելի հոգնած տեսք ուներ»[3]:

Վեպի գլխավոր հորոս Վահան Ստեփանյանը, որը գրողի պապի նախատիպն էր, հայկական կոտորածների ժամանակ կորցնում է ողջ ընտանիքը՝ ծնողներին, երիտասարդ կնոջը, ճակատագրի բերումով ողջ մնալով հայտնվում է Կոստանդնուպոլսում, որտեղից էլ մեկնում է Արմաշ՝ հոգևոր ճեմարանում սովորելու՝ իրականացնելու հոգևորական դառնալու իր երբեմնի երազանքը: Կոստանդնուպոլսում նրան օգնում է ոտքի կանգնել Սարգիս անունով հրաշալի մի հայ անձնավորություն, Վահանը երեք տարի սովորում է Արմաշի հոգևոր ճեմարանում, Սարգիսի մահից հետո թողնելով հոգոր ուսումը՝ վերադառնում է Կոստանդնուպոլիս, ամուսնանում Սարգիսի աղջկա՝ Անահիտի հետ: «Վահանը Կոտանդնուպոլիս՝ Սամաթիա, վերադարձավ և սկսեց ուսուցչություն անել սկզբում մոտակա ձկնորսական գյուղում՝ Ռոգոսթոյում, նաև հոդվածներ էր գրում հայկական լրագրերի

[2] Գրական թերթ, Սուրէն Դանիելեան, Մեզ սպասող ամբողջական Սուրեան, Եր,, 2017, Մայիսի 6:

[3] Գրական թերթ, Փիթեր Սուրյան գրողը և Սփյուռքը, Եր., 2017, Մայիսի 6:

համար, հետո անդամագրվեց Հնչակյան հեղափոխական կուսակցությանը և մի քանի տարի անց ամուսնացավ Անահիտի հետ։ Մեկ տարի անց նրանք երեխա ունեցան՝ արու զավակ։ Վահանը նրան Սարգիս անվանեց Անահիտի հոր պատվին»[4]։

Վահանին ի վերուստ տրված չէր երջանիկ լինել, կնոջ մահից հետո որդուն խնամակալության է տալիս կնոջ հարազատներին։ Վերջինս կրկին ամուսնանում է, որ որդին անմայր չմեծանա։ Վահանը ազդեցիկ անձնավորություն է դառնում Պոլսում, նրա հետ հաշվի էին նստում բոլորը՝ անկախ ազգային պատկանելությունից, նա ուներ իր խմբագրատունը։ Ստեփանյանների տունը հավաքատեղի էր հայ մտավորականների և հնչակյանների համար։ Վահանը, օգտագործելով իր կապերը, Պողոս Պողոսյանին, որը որպես Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ պետք է մեկներ Ամերիկա՝ տեղի հայերի շրջանում դրամահավաք կազմակերպելու, կարողանում է նրան ծպտված դուրս բերել երկրից՝ վտանգելով իր կյանքը։ Շատերի հետ թուրք ոսիկանները 1915 թվականի աշնանը ձերբակալում են Վահանին և միայն տարիներ անց նա ազատ է արձակվում և իր որդուն՝ Սարգիսին ուղարկում է Ամերկա՝ ուսանելու։ «Հայկական եկեղեցու բակում վեպի հերոս հայրը պապիս պես, նախքան թուրք ոստիկանների կողմից հենց եկեղեցուց 1915 թվականի սեպտեմբերյան մի օր առևանգվելը,- վկայել է Սուրյանը,- հայկական լրագրի խմբագիր էր Կոստանդնուպոլսում։ Ինձ պատմել են, որ 1919 թվականին Անատոլիայից Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո պապս տասնվեցամյա ապագա հորս ուղարկել է Ամերիկա, որպեսզի ազդեցիկ լրագրող դառնա, Պոլիս վերադառնա և որպես գրող ծառայի Հայաստանին՝ զենքի փոխարեն ձեռքն առնելով Բառը։ Բայց հայրս՝ Զարեհ Սուրյանը, այդ պատվիրանը չի կատարել։ Նոր Աշխարհում միաառժամանակ պայքարելուց հետո նյույորքցի ճարտարապետ է դարձել։ Եվ չնայած երբեք չի ակնարկել, թե ուզում է, որ ես գրող դառնամ, հիմա, երբ վերհիշում եմ մանկությունս, զգում եմ, որ նա անխոս, լռելյայն, գուցե նույնիսկ խորհրդավոր կերպով, կարծես ենթագիտակցաբար ինձ է փոխանցել իր փայփայած հույսը, թե ես հենց այդպես էլ կվարվեմ, կանեմ այն, ինչ ինքը չի արել, և որ մի օր մեկը կլինեմ նրանցից, որ Ֆրանց Վերֆելի բառերով, «բարձրաձայնելու են համբերի, խեղված երեխաների…» մասին, որ փորձելու եմ համեստորեն կրել հայոց «անընմբռնելի ճակատագրի» վկայությունը…»[5]։

Այստեղ Ամերիկայում նրան աջակցում է հոր վաղեմի ընկերը՝ Պողոս Պողոսյանը, որն էլ երիտասարդին ծանոթացնում է վտարանդի քաղաքական

[4] Փ.Սուրյան, Դարպաս, Երևան, ՀԳՄ հրատ., էջ 17։

[5] **Գրական թերթ,** Փիթեր Սուրյան գրողը և սփյուռքը, Երևան, 2017, Մայիսի 6։

հայ գործիչների հետ, որոնք կեղծ բարեպաշտության ներքո ախոյաններ են, պատկանում են տարբեր կուսակցությունների, ունեն ներհակ գաղափարներ: Սարգիսը աշխատում է հնարավորինս հեռու մնալ հայ քաղաքական կյանքից, նրա հետաքրքրում են միայն ուսումն ու իր հետագա կյանքը: Դպրոցից դպրոց փոխադրվելով, հարստացնելով գիտելիքները, հմտանալով անգլերեն լեզվի մեջ՝ նպատակասլաց երիտասարդը սովորում է տեխնոլոգիական համալսարանում, միաժամանակ աշխատում, որ հոգա իր ապրուստի միջոցները, ուսման վարձը վճարի: Հայրը շատ էր ցանկանում, որ որդին լրագրող դառնա և շարունակի հանուն Հայաստանի մղվող պայքարը: Վերջինս ընտրում է այլ ճանապարհ՝ վշտացնելով հորը: Սարգիսին խոր վիշտ է պատճառում հոր անժամանակ մահը, հոգեպես ճնշում է գրպանում գումար չունենալը: «Գրպանը դատարկ էր, հոր համար մի ծաղիկ անգամ չէր կարող ուղարկել: Սարգիսը չգիտեր՝ վիշտն առած ուր գնալ, թափառում էր փողոցներում: Եվ այլևս չէր կարող փոստով հորն ուղարկել Տեխնոլոգիականից ստացած դիպլոմը: Հասկացել էր, որ հենց դա պետք է աներ, իսկ հիմա դա անելն անհնար էր»[6] : Անելանելի վիճակում է հայտնվում, ետ՝ Կոստանդնուպոլիս, գնալ չէր կարող, այնտեղ ինքն իր ծննդավայրում, ինչպես հազարավոր հայեր օտար էին: «Ինքն այլևս երբեք Կոստանդնուպոլիս չէր վերադառնալու: Գրողը տանի՛: Կոստանդնուպոլիս չէր: Ստամբուլ էր: Հինգ հարյուր տարի էր անցել, բայց իրենք շարունակում էին Կոստանդնուպոլիս կոչել: Եվ թուրքերի նոր հայրը՝ Քեմալը, իր հերթին խլել էր պապայի տպագրատունը: Փառք Աստծո, որ ինքը դեռ մի-երկու բառ ասում է դրանց մասին, որպեսզի դրանց մասին լռությունը խախտի»[7]:

Սարգիսը հիշեցնում է Վ.Սարոյանի «Բիթլիս» դրամայի հերոս ծերունուն, որը իր նախնիների հայենիքում օտար է, ինչպես և ինքը, թեև այդ երկրի լիիրավ տերն է, զրկված բոլոր իրավունքներից, նա չի պատրաստվում ետ վերադառնալ, ծառայել թուրքերին, որոնք իրենց ձեռքից խլել են հայրենիքը, հարազատների կյանքը, շատերն էլ իրենց կյանքը փրկելով, նոր գեղեցիկ կյանքի ակնկալիքով հեռացել են հայրենի երկրից, այստեղ՝ հեռավոր Ամերիկայում, նա իրեն օտար և միայնակ չի զգում: Հերոսի համար դժվար էր համակերպվել նոր միջավայրին, որտեղ դեռ իրեն չէին ընդունում, ժամանակ և համբերություն էր հարկավոր դառնալու այդ երկրի մի մասնիկը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները, զրկանքները, օտարների արհամահական վերաբերմունքը՝ որպես մի երրորդ անձի, ի վերջո դառնում է նրանցից մեկը, դառնում է ամերիկացի: Օտարության մեջ փոխվում է նրա

[6] Նույն տեղում, էջ 85:
[7] Նույն տեղում, էջ 86:

հոգեբանությունն ու մտածելակերպը, նա ընդունում է ամերիկյան բարքերն ու սովորույթները, առաջնորդվում տեղի բարոյական նորմերով և օտար արժեքներով: Սարգիսն շահի թելադրանքով, երկրում ազդեցիկ դիրք գրավելու նպատակով ամուսնանում է պարոն Դորյանի աղջկա՝ Նվարդի հետ, կազմում հայկական ընտանիք: Ինչ նկատառումներով էլ նա ամուսնանանար, կարևորն այն է, որ նա կազմում է հայ ընտանիք. տարագրության պայմաններում հայ ընտանիքի պահպանումը ազգապահպան կարևոր երաշխիքներից է, որը քաջ գիտակցում է հերոսը: Մեծ դժվարությունների և փորձությունների միջով անցած Սարգիսն Արլեն Ավագի նման իր զավակներին փորձում է մեծացնել առանց ազգային բարդույթների որպես ամերիկացի, նոր, առավել բարենպաստ պայմաններում և սոցիալական ու մշակութային առավել լուսավոր ու հեռանկարային դաշտում: Չհիշել, մոռանալ ողբերգական անցյալը: Նրանց զերծ պահել վշտի ու վրեժի և այլ բարդույթներից, այս դիրքորոշումը, անշուշտ, հետևանք է հայ ժողովրդի ապրած մեծագույն աղետի:

«Հայրս հրաժարվում էր հայերեն սովորեցնել մեզ,-վկայում է որդին,- երբ երեխա էինք և որոշ հայեր լրջորեն նրա հետ վիճում էին՝ նեղելով, որպեսզի բացատրեր, թե ինչու էր այդ կերպ վարվում: Բայց շատ նեղելու կարք չկար: «Փոլն ու Գրեյսն առաջին հերթին ամերիկացի են և եթե հետագայում իրենց կհետաքրքրի, նաև՝ հայ: Դուք կարող եք կործանել ձեր երեխաներին, նրանց կոտրված անգլերեն և կոտրված սիրտ ավանդելով: Իսկ ես՝ ոչ: Նրանք պետք է մայրենի լեզու ունենան, այն երկրի լեզուն, որտեղ ապրում և աշխատում են: Եվ դա անգլերենն է»»[8]:

Ի տարբերություն Արլեն հոր՝ Սարգիսը երբեք չի թաքցրել իր հայ լինելը և դեմ չէ, որ հետագայում, եթե որդին ցանկանա հայերեն սովորել, ինքը նրան կաջակցի, մեկ տարով Սուրբ Ղազար կուղարկի: «Տեղի մենաստանը կապրի, լորդ Բայրոնի մենախցում և հայերեն կսովորի, սակայն ոչ թե որպես աշխատանք, ինչպես Բայրոնը վարվեց սեփական մեղքերին թողություն տալու համար, այլ որովհետև ինքն է այդպես ցանկանում: Լավ հայերեն, որով ժամանակին նրա պապն է գրել»[9] :

[8] Նույն տեղում, էջ 127:

[9] Նույն տեղում, էջ128

Տանը, թեև արգելված էր հայերեն խոսել, Դորյան տատը՝ հայ առաքինի կնոջ այս տիպարը, գաղտնի երեխաների հետ հայերեն էր խոսում, տարեց կինը շատ լավ հասկանում է, որ օտար երկրում հային հայ պահողը առաջին հերթին մայրենի լեզուն է, ազգային ինքնությունը պահելն ու պահպանելը:

Սարգիս Ստեփանյանը փորձում է իր զավակներին ազատել ազգային բարդույթներից: Նա քաջ գիտակցում է, որ եղեռնը ծանր հետք է թողել հայ ժողովրդի հոգեբանության վրա, որը բացասաբար է անդրադառնում նրա կյանքի վրա և ջանում է հնարավորինս իր հարազատներին ձերբազատվել դրանից: «Պետք է փորձես երբևէ հայ լրագիր կարդալ: Դրանք դեռևս խոսում են այն մասին, թե թուրքերն ինչեր են արել մեզ: Ամեն շաբաթ խմբագրական էջում: Աստված իմ: ԻՆքս թուրքերին ատում եմ: Անխուսափելի բան է: Բայց հայեր կան, որ այնքան են հպարտանում այն ամենով, ինչի միջով անցել են: Ինչու չեն կարողանում այսօր հպարտանալ իրենցով: Կասեմ թե ինչու: Որովհետև ոչինչ չեն արել իրենց համար որպես անհատներ: Տառապել են և կարծում են, թե ամբողջ աշխարհին իրենցով պետք է ապրի: Ճիշտ է, տառապել են: Սարսափելի էր: Էր: Հետո՞»[10]: Հերոսը սթափ հայացքով է նայում կյանքին: Յուրաքանչյուր հայ իր տեղը պետք է գտնի աշխարհում, նվաճի իր ապրելու իրավունքը աշխարհի ազգերի ընտանիքում, իր գործով բարձր պահի հայի պատիվը: Ողբալով, անցյալը թմբկահարելով որպես «հավերժական զոհ», հայը չի կարող հարգանքի արժանանալ, չի կարող իր ասելիքը աշխահի մարդկությանը հասցնել և լուծել ոչ միայն իր, նաև իր ազգի համար կարևորագույն հարցեր: Որդին՝ Փոլը, որ արդեն հայտնի լրագրող էր, Մայքլ Արլեն Կրտսերի նման ձեռնամուխ է լինում որոնելու իր ազգային էությունը, հաստատելու իր ազգային ինքնությունը, նախընտրում է իր արմատների վերադարձը: Մեկնում է նախնիների հայրենիքը՝ Կոստանդնուպոլիս, ուսումնասիրելու 20-րդ դարասկզբի հայոց պատմությունը, ծանոթանալու, շփվելու հայրենակիցների հետ, ճանաչելու թուրքերին, լինելու դեռևս պահպանված հայ կրոնական-մշակութային օջախներում: Այստեղ նա գտնում է իր պապի՝ Վահանի ձեռատետրերը՝ դարասկզբի հայոց կյանքը պատկերող գրառումներով, որոնք որպես իրենց հայ լինելության սուրբ մասունք իր հետ բերում է Բոստոն, որպեսզի շարադրի իր ազգի եղելությունը: «Գիտե՞ս, Երվանդը (խոսքը խորթ հորեղբայր մասին է- Ն.Գ.) մի սնդուկ լիքը պապիկի գրվածքներից ցույց տվեց, տետրերի մեջ է գրել: Ասաց, որ պապիկը հայ ժողովրդի պատմության երկու երրորդը գրի է առել, և դրա կեսն այրվել է ինչ-որ մեծ հրդեհի ժամանակ, որը քաղաքի մի ամբողջ թաղամաս է ոչնչացրել, և պապիկը սկսել է նորից գրել, բայց չի հասցրել ավարտել: Երվանդն ինձ մի

[10] Նույն տեղում, էջ 224:

քանի գիրք տվեց, որպեսզի հետս բերեմ և ասաց, որ դրանցից մեկն օրագիր է, որ պապիկը վարել է աքսորավայրում, իրար կարած տարբեր թղթեր են»[11]:

Մարգիսը, ընթերցելով հոր գրառումները, հուզվում է, նա չէր պատկերացնում, որ անցյալը խոր վիշտ կարող պատճառել իրեն, որ անցյալը կարող է ավելի անմիջական լինել, քան անմիջական ներկան: «Հայրս սկսեց արտասվել: Ուսերը ցնցվում էին: Հազիվ տաս-տասնհինգ վայրկյան տևեց: Հանկարծ նրա կողմից խոր հոգոցի ձայն լսեցի՝ «Ա՜խ»:

-Այլևս չեմ կարող:

Երբ սրբել էր դեմքն ու սթափ աչքերով վեր նայեց, հայացքը հառելով այն նկարի վրա, որ ժամանակին ինքն էր նկարել՝ արծաթափայլ կարմիր թյունիկը դրսում, սեղանի վրա, ստվերախիտ ծառերի տակ:

-Պապիկդ հրաշալի մարդ էր:

Կանգնածս տեղում ծնկի իջա: Առանց մարմինը թեքելու՝ հայրս որքան կարող էր գլուխս շրջեց, որպեսզի աչքերիս մեջ նայեր: Կռացա, որպեսզի կարողանար աչքերս տեսնել: Ոչինչ չասացինք»[12]:

Նա խորապես ցնցվում է, խիղճը տանջում է, որ այդքան տարի չի հիշել հորը, գուցե և հիշել է, բայց երբեք չի բարձրաձայնել, փորձել է մոռացության տալ անցյալը՝ հանուն իր և իր ընտանիքի բարօրության, բայց հասկանում է ամենակարևորը, որ անցյալը չի մոռացվում, որ անցյալը մարդու խիղճն է, որին պետք է քո լինելիությամբ պատասխանատու լինես, անցյալը քո ազգային էությունն է, ինքնությունը, առանց որի, այն էլ օտարության մեջ, անհնար է որպես հայ ապրելը:

Ազգային ինքնությունը որոնելու ճանապարհին հերոսը, որ ինքը գրողն է, առերեսվում է հայոց պատմությանը, վեր հանում նրա ողբերգական դրվագները, անաչառ ներկայացնում է հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերությունները, ցեղասպանության շրջանում գոյություն ունեցող մթնոլորտը:

Փոլը, ուսումնասիրելով իր ազգի պատմությունը, Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուի փաստաթղթերը, բարձր գնահատելով նրա հայանպաստ գործունեությունը, իրավացիորեն ներկայացնում է երիտթուրքերի՝ Թալեաթ բեյի, Էնվեր, Ջեմալ փաշաների հայատյաց գործողությունները, հզոր պետությունների՝ հանձինս Անգլիայի և Գերմանիայի նրանց աջակցելը, Թուրքիային որպես հզոր պետության քծնելը: Պատմական ճշմասրտությունը հանրությանը հրամցնելու համար գրողը սթափ հայացքով ներկայացնում է

[11] Նույն տեղում, էջ 186:

[12] Նույն տեղում, էջ 138:

Մորգենթաուի և Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հանդիպումը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ատելություն և արհամարհանք փոքր ազգերի հանդեպ:

«-Աշխարհը շարունակ Գերմանիային պատասխանատու պիտի համարի այս ոճիրների համար այն իմաստով, որ կարող էր ջարդերը դադարեցնել և չգործադրեց այդ ուժը:

-Ինչ-որ ասում եք, կարող է ճիշտ լինել,-պատասխանեց Վայգենհայմը,- բայց մեզ համար մեծագույն խնդիրն այս պարագայում հաղթելն է: Թուրքիան ջնախջախեց իր արտաքին թշնամիներին Դարդանելում և Գալլիպոլիում: Հիմա նրանք ջանում են իրենց ներքին գործերը կասրգավորել: Թալեաթն ինձ հայտնել է, որ մտադիր է այդ գործն ավարտել հաշտություն կնքելուց առաջ...Հայերն ինքնին այնքան էլ մեծ արժեք չեն ներկայացնում: Դուք ձեր պատկերացումը կազմում եք զարգացած դասակարգի այն հայերի հիման վրա, որոնց հետ հավանաբար շփվել եք այստեղ՝ Կոստանդնուպոլսում: Բայց բոլոր հայերն այդ տիպարով չեն»[13] :

Օգտվելով անպատժելիությունից՝ Թուրքիան կազմակերպում է հայոց կոտորածը՝ ողջ մեղքը գցելով հայերի վրա՝ որպես տուժող ներկայացնելով իրենց, իրենց վայրագությունները որակելով որպես ինքնապաշտպանություն: «Հայերը մերժեցին զինաթափ լինել,-ասում է Թալեաթը,- երբ մենք խնդրեցինք նրանց: Մեզ դիմադրեցին Վանում ու Զեյթունում և օժանդակեցին Ռուսաստանին: Մենք պետք է պաշտպանվենք նրանցից: Մենք արդեն հայերի երեք քառորդի հարցը լուծել ենք: Բիթլիսում, Վանում և Էրզրումում բնավ մարդ չի մնացել, այն ամենից հետո ինչ արել ենք նրանց հանդեպ, ներկայումս նրանց ատելությունը մեր նկատմամբ այնքան մեծ է, որ ստիպված ենք մեր գործն ավարտին հասցնել, երբեք չենք զղջում»[14] :

Հերոսը վեպում խոսում է նաև քաղաքական գործոնի մասին: Նա հայկական կոտորածների գործում քննադատում և մեղադրում է ոչ միայն Թուրքիային և հզոր պետություններին՝ անմիջական կապ տեսնելով ցեղասպանության և մարդկային անտարբերության միջև, իրավացիորեն դատապարտում է նաև հայ անմիաբան քաղաքական կուսակցություններին՝ կիսելով Հեփվորսի տեսակետը[15], որոնք իրենց մեղքի բաժինն ունեին: Նրանցից յուրաքանչյուրը յուրով էր փորձում կանխել եղեռնը, միայնակ, առանց համագործակցելու մյուսների հետ. ինչ խոսք, նրանց հայափրկիչ ձգտումները արդարացի էին, բայց սկզբից ևեթ, ինչպես իրավացիորեն

[13] Նույ տեղում, էջ 73:

[14] Նույն տեղում, էջ 70:

[15] **Hepworth Gearge,**Through Armenia on Horsebackl, N.Y., E. P. Duttonn & Co, Press, 1980 (criticizm).

նկատել է Սուրյանը, դատապարտված էին անհաջողության, նրանք սթափ չէին գնահատում իրվիճակը, ունակ չէին իրենց գործողությունները համապատասխանեցնել իրենց հնարավորությունների հետ[16]:

Գրողը կարողացել է վեր հանել պատմաքաղաքական իրավիճակը: Սուրյանը ներկայացնում է նաև 60-ական թվականներին հայ քաղաքական կուսկցությունների վարած գործունեությանը, ցույց տալիս նրանց անհանդուրժողական, թշնամական վերաբերմունքը միմյանց հանդեպ, որը ծնում է նոր ողբերգություն՝ խլելով մարդկային կյանքեր: «Երեկ Հայ Առաքելական «Սուրբ Խաչ» եկեղեցում արքեպիսկոպոս Ղևոնդ Դուրյանը, մեր երկրում հայոց եկեղեցու գերագույն առաջնորդը, պատարագի արարողություն անցկացնելու համար դեպի խորան բարձրանալիս հարձակման է ենթարկվել մարդասպանների կողմից և 200 հավատացյալների աչքի առաջ սպանվել է դաշույնի հարվածով: Սպանության դրդապատճառը հայկական քաղաքական ուժերի միջև գոյություն ունեցող տարաձայնություններն են»[17]: 206Սուրյանը խիստ քննադատում է քաղաքական ուժերին՝ հանձինս հնչակների և դաշնակների, որոնք պատմությունից անգամ դասեր չքաղեցին և շարունակում են իրենց հայակործան գործողությունները: Նույն այդ քաղաքական ուժերի զոհն է դառնում վեպի հերոս Սարգիսը: Դժվար չէ նկատել, Սուրյանը քննադատաբար է մոտենում ոչ միայն թուրքական կառավարությանն ու հզոր տերություններին, նաև հայ քաղաքական ուժերին, նրան մտահոգում է նրանց անխոհեմությունը, որը կարող է հային հեռացնել ազգային ինքնությունից, վաղ թե ուշ նրան կարծանման մղել: Սա, անկասկած, վտանգավոր միտումներ է պարունակում և սպառնալիք է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանը: Սուրյանը տալիս է ազգային ինքնությունը պահպանելու իր բանաձը, որն է՝ հայ քաղաքական գործիչների, մտավորականների, հոգևոր դասի համախմբումը և միասնական գործելը, որը տարեգրության մեջ հայտնածներին ազգային ոգով, հայրենասիրությամբ կպարուրի և նրանց կմղի համազգային գերխնդիրները լուծելու դժվարին, բայց և հույժ կարևոր գործին, կհանգեցնի հայոց ցեղասպանության դատապարտմանը, հայոց եղեռնի փաստը համաշխարհային հանրությանը ճանաչեցնել տալուն, աշխարհի արդար դատավճռին:

Իր վեպով Սուրյանը փորձեց վեր պահել սփյուռքահայի ազգային ինքնությունը, որն ինքնին բարդ ու դժվարին գործ է, որին պետք է ձեռնամուխ լինի ազգի հոգսերով ապրող յուրաքաչյուր սփյուռքահայ գրող «Երբեմն, երբ սիրտն լցված է, բառեր չես գտնում արտահայտելու զգացածդ, - 2010

[16] Փ. Սուրյան, Դարպաս, էջ 199:

[17] Նույն տեղում, էջ 206:

թվականի դեկտեմբերի 12-ին Ազատություն ռադիոկայանին տված հարցազրույցում, ասել է Փիթեր Սուրյանը, - մեր գործը գրելն է, ոչ թե խոսելը: Իսկ գրելն այնքան բարդ է և առավել պատասխանատու»[18]:

«Սուրյանի ստեղծագործությունները,-ինչպես իրավացիորեն նշել է ամերիկացի գրաքննադատ Դեյվիդ Ստեֆեն Քալոն, - ներշնչանքի աղբյուր են ամերիկահայ գրողների հաջորդ սերունդների համար, նրա ազդեցությունը նկատել է իրարից բոլորովին տարբեր գրողների գործերում Մայքլ Արլեն, Փիթեր Նաջարյան, Փիթեր Բալաքյան, որոնցից յուրաքանչյուրը նույնպես պատմական հիմքի վրա ստեղծած պատումը հայոց անցյալի բացահայտմանն ուղղված ինքնակենսագրական որոնումների հետ է համատեղել»[19]:

Վեպը ինչպես հայության, այնպես էլ օտար հասարակության շրջանում արժանացել է բարձր գնահատականի: «Կուռ, ուշագրավ, հիացմունքի արժանի վեպ, - գրում է ամերիկացի գրող, գրաքննադատ Ռիչարդ Սուլիվան,- ընտանեկան սեր, հատկապես հայր-որդի հարաբերություններում, քաղաքական զգոնություն, ազգային ուժգին զգացում, կրքոտ հայրենա-սիրություն և հեգնական մահ»[20]:

Նելլի Գալստյան

Ազգային ինքնության թեման Փիթեր Սուրյանի «Դարպաս» վեպում

Ամփոփում

Սփյուռքում ազգային ինքնության դրսևորման հիմնական միջոց եղել է ու մնում է ցեղասպանության հիշողությունը, ազգային ոգին պահելն ու պահպանելը, ուստի պատահական չէ, որ Փիթեր Սուրյանը իր «Դարպասը» վեպում անդրադարձել է եղեռնի թեմային, պատկերել ողբերգական, փորձություններով լի հայի կյանքն ու ոդիսական ճանապարհը, նրա վայրիվերումներն ու հոգեկան ապրումները, հույսն ու հավատը վաղվա օրվա հանդեպ, նրա անկոտրում ազգային ոգին: Փիթեր Սուրյանը վեպում վերապրածի, ականատես վկայի աչքերով պատկերել է եղեռնը, գաղթի դաժան ճանապահը, սովահար և լլկված մանուկներին, հայերի հալածանքները, թուրքերի անմարդկային արաքները, դաժանությունները,

[18] Ազատություն ռադիոկայան, 07.12.2010թ. Հայաստանում է ամերիկահայ գրող Պիթեր Սուրյանը:

[19] Փ.Սուրյան, Դարպաս, էջ 330:

[20] Նույն տեղում:

հայ ժողովրդի մեջ անմեռ պահպանվող ազգային անկոտրում ոգին, ազգայինից նահանջը:

Փիթեր Սուրյանը **«Դարպաս» վեպով ընթերցողի դատին ներկայացրեց ոչ միայն հայոց ցեղասպանությունը, նաև 20-րդ դարասկզբի արևմտահայ և 50-ականների սփյուռքահայ քաղաքական կյանքը, հերոսների մաքառումները, սերնդափոխությունը, նորօրյա կյանքն իր խնդիրներով ու բարդույթներով,** ազգային ինքնությունը պահպանելու, աշխարհասփյուռ հայությանը ազգային ոգով, հայրենասիրությամբ պարուրող, համազգային գերխնդիրները լուծելու, հայոց ցեղասպանության դատապարտմանը, հայոց եղեռնի փաստը համաշխարհային հանրությանը ճանաչել տալու, աշխարհի արդար դատավճռին հասնելու իր բանաձը, որն է՝ հայ քաղաքական գործիչների, մտավորականների, հոգևոր դասի համախմբումը և միասնական գործելը:

Нелли Галстян

тема национальной идентичности в романе Питера Суряна «Варота»

Резюме

Память о Геноциде и сохранение национального духа была и остается главным средством выражения национальной идентичности в диаспоре, потрясений и душевных переживаний, надежды и веры в будущее, ее нерушимого национального духа. В романе «Варота» П.итер Сурян изобразил геноцид, жестокий путь переселения, голодающих детей, преследования армян, бесчеловечные действия турок, жестокость, бессмертный дух армянского народа: Автор романа изобразил геноцид, жестокий миграционный путь, голодающих детей, преследование армян, бесчеловечные действия турок, зверства, бессмертный национальный дух, сохраненный в армянском народе, отступление от нации через глазами выжившего, очевидца. Петр Сурян представил не только Геноцид армян, но и политическую жизнь армян западно-армянской диаспоры начала 20 века, борьбу героев, смену поколений, современную жизнь с ее проблемами и комплексами, сохранение национальной идентичности, патриотический дух армян всего мира. Его формула признания факта Геноцида армян перед мировым сообществом, для достижения справедливого вердикта в мире заключается в объединении армянских политиков, интеллигенции и духовных лиц и их совместной деятельности.

Nelli Galstyan

The theme of national identity in the novel of Piter Sourian " The gate"

Summary

The memory of the Genocide and the preservation of the national spirit was and remains the main means of expressing national identity in the diaspora, shocks and emotional experiences, hope and faith in the future, its indestructible national spirit. In the novel "The gate" Piter Sourian depicted genocide, the cruel way of resettlement, starving children, the persecution of Armenians, the inhuman actions of the Turks, cruelty, the immortal spirit of the Armenian people: The author of the novel depicted genocide, cruel migration route, starving children, persecution of Armenians, inhuman actions Turks, atrocities, immortal national spirit preserved in the Armenian people, retreat from the nation through the eyes of a survivor, an eyewitness. Petr Suryan presented not only the Armenian Genocide, but also the political life of the Armenians of the Western Armenian Diaspora at the beginning of the 20th century, the struggle of heroes, the change of generations, modern life with its problems and complexes, the preservation of national identity, the patriotic spirit of Armenians around the world. His formula for recognizing the fact of the Armenian Genocide before the world community, in order to achieve a fair verdict in the world, is to unite Armenian politicians, intellectuals and clergy and their joint activities.

Խմբագրություն է ուղարկվել 05.10.2021թ.
Հանձնարարվել է գրախոսության 20.10.2021թ.
Տպագրության է հանձնարարվել 04.03.2022թ.